

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
26.03.2021թ. թիվ ԱՖ627841 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց
բավարարման թողնելու մասին

<< 19 >> 05 2021թ. 7-13- 2848

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ
Ե.Կարապետյանս, վերանայելով Աշոտ Հակոբյանի ՄԴ/37741-21 դիմումի քննարկման
արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արցախի փողոց 24/1 շենքի 21 բնակարանի բնակիչ Աշոտ Հակոբյանը
դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական
իրավախախտման վերաբերյալ գործով 26.03.2021թ. թիվ ԱՖ627841 որոշումը՝ նշելով, որ
իր գործողություններում բացակայել է իրավախախտումը: Միաժամանակ
հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ դիմումին ավելացնելու ոչինչ չունի՝ պնդելով, որ
տրանսպորտային միջոցը վարել է անվտանգության գոտիով ամրակապված:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման
վերաբերյալ գործով վիճարկվող որոշումը ենթակա է կատարման հետևյալ
պատճառաբանությամբ.

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի
24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի համաձայն՝ մեխանիկական տրանսպորտային
միջոցի վարորդը պարտավոր է կառուցվածքով նախատեսված անվտանգության
գոտիներով կահավորված տրանսպորտային միջոցներով երթևեկելիս **լինել
ամրակապված** և չփոխադրել անվտանգության գոտիներով չամրակապված ուղևորների:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 123.3-րդ հոդվածի
համաձայն՝ տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապված կամ
սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցները
վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապված կամ սաղավարտը
չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը առաջացնում են տուգանքի
նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 26.03.2021թ. ժամը 17:00-ի սահմաններում
Երևան քաղաքի Խորենացի փողոցում քաղաքացի Աշոտ Հակոբյանի վարած <<TOYOTA>>
մակնիշի 174 LV 61 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային
ոստիկանության ՃՊԾ ուղեկցող վաշտի 2-րդ սպայական դասակի ավագ տեսուչ,
ոստիկանության մայոր Հ.Ջանյանի՝ <<Ճանապարհային երթևեկության անվտանգության
ապահովման մասին>> օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի <<բ>> կետի պահանջի
խախտման համար, այն է՝ վարորդն ավտոմոբիլը վարել է անվտանգության գոտիով
չամրակապված վիճակում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի
123.3-րդ հոդվածով կայացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
ԱՖ627841 որոշումը:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման
համաձայն՝ քաղաքացի Աշոտ Հակոբյանի կատարված իրավախախտումը հիմնավորող՝

տեխնիկական միջոցների կիրառմամբ ձեռք բերված ապացույցներ առկա չեն, սակայն իրավախախտումն եղել է անմիջապես իրենց տեսադաշտում, ակնհայտ և պարզ տեսանելի, ինչի կապակցությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն և կայացվել ԱՖ627841 որոշումը: Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն՝ Ճանապարհային ոստիկանության ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցը կանգնեցնել, եթե **ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները:** Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման և տրանսպորտային միջոցների ապակիների լուսաթափանցելիության սահմանված չափի խախտումների համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի հատկանիշները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 26.03.2021թ. թիվ ԱՖ627841 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Աշոտ Հակոբյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ ուղեկցող վաշտի:



Ե. Կարապետյան